*Е. С. СААКЯН, Революционные движения молодежи в Армении и Закавказье в конце XIX—начале XX века*, Ереван, изд-во «Айастан», 1987, 242 с.

**Ե. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ, Երիտասարդության հեղափոխական շարժումները Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դ. վերջին—20-րդ դ. սկզբին, *Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1987, 242 էջ։***

*Ազգային-ազատագրական և սոցիալական շարժումների հետ կապված ամենատարբեր պրոբլեմների ու ասպեկտների հետազոտությունը սովետական պատմագիտության հրատապ խնդիրներից է։ Կարևորագույն պրոբլեմներից մեկը, ինչպես ազգային-ազատագրական, սոցիալական շարժման, այնպես էլ սոցիալիստական հեղափոխության համար մղված պայքարում սովորող երիտասարդության տեղի և դերի պարզաբանումն է։ Այս իմաստով շնորհակալ գործ է կատարել Ե. Սահակյանը. հրապարակ հանելով գրախոսվող աշխատությունը։*

*Գրքում շարադրված են 1870—1917 թթ. հեղափոխական շարժումները Հայաստանում և Անդրկովկասում, բնութագրված են այդ շարժումների փուլերը, բացահայտված են երիտասարդական տարերային հուզումները գիտակցական հեղափոխական շարժումների վերածվելու հանգամանքներն ու պատճառները, սովորողների տեղն ու դերը Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալական և ազգային-ազատագրական շարժումների ծավալման գործում, սովորողների աշակցությունը նվաճելու համար տարբեր կուսակցությունների մղած պայքարը, վերարտադրված է ցարիզմի ազգահալած դպրոցական քաղաքականությունը։*

*Հեղինակին հաջողվել է պատմական ճշմարտացիության դիրքերից շարադրել երիտասարդական շարժումների սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, սովորող երիտասարդության հեղափոխական շարժումները։*

*Առաջին քայլերից սկսած սովորող երիտասարդության առաջադեմ կազմակերպությունը գործում էր որպես կուսակցության մարտական օգնական, իր հետևից տանելով ռուսական կայսրության ժողովուրդների երիտասարդ ներկայացուցիչներին։ Հեղափոխական շարժումներից անմասն չէին կարող մնալ նաև հայ սովորող երիտասարդները։ Նրանց պայքարում կարևոր տեղ գրավեց երկրի պետական ու ազգային ուսումնական հաստատություններում տիրող կարգերի փոփոխման հարցը։*

*Հեղինակը ցույց է տալիս, որ հայ աշակերտության հեղափոխական շարժումները ծնվեցին այն սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր կացությունից, որի մեջ ապրում էր հայ ժողովուրդը։ Բացի այդ, ցարական կրթական համակարգի տեղական մարմիններն ամեն կերպ ոտնահարում էին ոչ ռուս բնակչության ազգային արժանապատվությունը, մայրենի լեզուն։ Անդրկովկասի ժողովուրդները հնազանդ լեռպով չէին ենթարկվում ցարիզմի ռուսականացման քաղաքականությանը։ Եթե սկզբնական շրջանում ցույց էր տրվում պասիվ դիմադրություն, ապա հետագայում շարժումը լայն մասշտաբներ է ընդունում՝ ցարական կառավարությանն դգացնել տալով իր ուժը։*

*Ե. Սահակյանը ճիշտ է նկատում, որ XIX դ. 60—70-ական թվականներին հայ ազգային-ազատագրական շարժումները ծավալվեցին տարբեր հասարակական հոսանքների դիրքերի ու հայացքների սուր բախման պայմաններում, և որ հայ աշակերտության ինքնազարգացման, գաղտնի խմբակների գործունեության վրա դրական, եթե ոչ վճռական ազդեցություն էին գործում Ռուսաստանից այստեղ եկած ուսանողները, որոնք էլ հաճախ որոշում էին խմբակների գործունեության ուղղությունները։ Աշխատության մեջ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ մեզանում մարքսիստական գաղափարների տարածման տեսակետից մեծ նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի կազմակերպած «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը», որի բովով անցած հայ ուսանողներ Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի և մյուսների գործունեության շնորհիվ էլ XIX դ. վերջին և XX դ. սկզբին ստեղծվում են մարքսիստական առաջին խմբակները։ Երբ հստակ են շարժման ծրագիրն ու նպատակները, պայքարն ավելի արդյունավետ է դառնում։ Այդ են վկայում 1900 թ. Իգդիրի, Ալեքսանդրա-*

պոլի ուսումնարանների, Շուշվա թեմական դպրոցի աշակերտների հուզումները, որոնց հետ կառավարությունը չէր կարող հաշվի չնստել։

Աշխատության անուրանալի արժանիքներից է այն որ հեղինակը ցարիզմի ազահալած քաղաքականության և դպրոցական ռեակցիոն ռեժիմի դեմ հայ աշակերտության պայքարը սերտորեն կապում է հայ և Անդրկովկասի մյուս ազգությունների աշխատավորական զանգվածների հեղափոխական պայքարի հետ, շանի որ դրանց պատճառները սկիզբ էին առնում միևնույն սոցիալական ակունքներից և հետապնդում միևնույն նպատակը։

Գրախոսվող աշխատության մեջ լուրջ ուշադրություն է դարձվում 1905—1907 թթ. երիտասարդական հեղափոխական շարժումներին, որոնք գաղափարական սնունդ էին ստանում Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Խանոյանի և ուրիշների ստեղծած «Հայ սոցիալ-դեմոկրատական միություն» մարքսիստական խմբակից։ Այդ թվականներին մեծ թափ են ստանում նաև սովորողների շարժումները, որոնք դարձել էին ավելի կազմակերպված ու նպատակասլաց։ Գրքում բազմակողմանիորեն լուսաբանվում են ռուսական առաջին հեղափոխության արձագանքներն Անդրկովկասում, որոնց հետևանքով ելույթներ են տեղի ունենում Շուշիի, Երևանի և այլ թեմական դպրոցներում։ Հեղինակին հաջողվել է վեր հանել այդ դպրոցների ուսուցիչների և առաջադեմ հասարակայնության ծավալած պայքարը հանուն դպրոցների հեղափոխական վերակառուցման, մի իրողություն, որը մինչև օրս մասնագիտական գրականության մեջ լիարժեք լուսաբանում չէր ստացել։

Ռուսական առաջին հեղափոխության պարտությանը հաջորդեցին ռեակցիայի տարիները։ Չնայած դրան, բոլշևիկները հսկայական աշխատանք էին կատարում սովորող երիտասարդությանը գաղափարապես ճիշտ կողմնորոշելու և իրենց հետևից տանելու գործում։ Բոլշևիկների ճշմարիտ խոսքը, նշում է հեղինակը, թափանցում էր աշակերտության սրտերը, նրանց համախմբում տիրող կարգերի դեմ բարձրացող պայքարի դրոշի ներքո։

Ռեակցիայի տարիներին հաջորդած հեղափոխական շարժումների նոր վերելքը գաղափարապես հասունացնում է աշակերտությանը և ակտիվացնում նրանց քաղաքական պայքարը։ Աշխատանքի շարադրանքից պարզ է դառնում, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը նախորդող շրջանում դնալով ստվարանում էին բոլշևիկներին հարող երիտասարդության շարքերը։ Այդ երիտասարդներից Ա. Խանչյանը, Ղ. Ղուկասյանը և ուրիշներ հետագայում դարձան Հայաստանի կոմունիստական կուսակցության աչքի ընկնող գործիչներ։

Աշխատության մեջ ցույց է արված, որ դասակարգային պայքարի ուժեղացման պայմաններում կրթության պրոբլեմն ավելի սուր բնույթ էր կրում։ Բուրժուազիան մշակել էր որոշակի իդեալներ, որոնց ոգով էլ ձգտում էր դաստիարակել աճող սերնդին։ Այդ պատճառով էլ գերազանցապես աղնվականական ուսումնական հաստատությունների հետ միասին այդ շրջանում լայն տարածում էին ստացել նաև բուրժուական ուղղության դպրոցները։ Հեղինակը բազմաթիվ փաստական տվյալներով բացահայտում է, որ շատ ուսումնական հաստատությունների (ինչպես օրինակ էջմիածնում) տրված ուղղությունն ու բովանդակությունը կարող էին ծառայել միայն հայ հոգևորականության և բուրժուազիայի շահերին։

Աշխատությունում վերլուծված պատմական փաստերն ու իրադարձությունները վկայում են, որ ռուսական երեք հեղափոխությունների ժամանակաշրջանում ծավալված աշակերտական շարժումները ցնցեցին լճացած հասարակական կյանքը, շոշափեցին բոլոր բնագավառները, մտան լուսավորության ոլորտը։ Սովորող երիտասարդությունն առաջ քաշեց միասնական դպրոցական համակարգի ստեղծման, ձրի ուսուցման կազմակերպման, մայրենի լեզվի դասավանդման, կրթության ոլորտում աշխատող քաղաքացիների իրավահավասարության, դպրոցը եկեղեցուց անշատելու և այլ խնդիրներ։

Պատմական իրադարձությունների զարգացումը համոզիչ ցույց է տալիս, որ բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության շնորհիվ երիտասարդության հեղափոխական շարժումները դարձան ընդհանուր հեղափոխական շարժման անբաժանելի մասը, իսկ մարքսիստական գաղափարները լայն տարածում ստացան սովորողների շրջանում։

Շատ կարևոր է նշել նաև աշխատության այժմեականությունը։ Ինչպես իրավացիորեն գրում է հեղինակը, այսօր կոմունիստական և բանվորական շատ կուսակցություններ, հենվելով պատմական փորձի վրա, կապիտալի երկրներում, հատկապես երիտասարդության շրջանում ակտիվորեն տարածում են գիտական սոցիալիզմի գաղափարները, պարզաբանում են կեծ հեղափոխական գաղափարների վտանգավորությունը, մեծ նշանակություն են տալիս դեմոկրատիայի և սոցիալական առաջադիմության համար հակաիմպերիալիստական պայքարում սովորող երիտասարդությանը ներգրավելու գործին։

Այսօր, ավելի քան երբևէ, անհրաժեշտ է երիտասարդության, և հատկապես սովորող երիտասարդության ուժն ու եռանդն ուղղել դեպի մեր հասարակության հեղափոխական վերակառուցումը, գործողության ուղեցույց ունենալով լենինյան կողմնորոշիչները, երիտասարդներին դաստիարակել դառնալու իսկական կոմունիստներ, ակտիվորեն մասնակցելու կուսակցության քաղաքականության կենսագործմանը։

Պրոբլեմի բարեխիղճ ուսումնասիրության վերլուծության ընդհանրացման հիման վրա հեղինակը հանգել է մի շարք նորովի ու հիմնավոր եզրահանգումների։

Գրախոսվող աշխատությունը, ինչ խոսք, անթերի չէ։ Նրանում պատշաճ լուսաբանում չի ստացել աշակերտական կազմակերպություններին իրենց հետևից տանելու նպատակով օպոզիցիոն կուսակցությունների մղած պայքարի պրոբլեմը։ Կան լեզվաոճական թերություններ։

Ամփոփենք։ Ե. Սահակյանի մենագրությունը գրված է գիտական-տեսական բարձր մակարդակով, փաստական-աղբյուրագիտական նյութի պատշաճ իմացությամբ, պատմական ճշմարտացիության դիրքերից։ Հայ պատմագրությունը հարստացել է շահեկան մի աշխատությամբ, որն ունի իմացաբանական, դաստիարակչական որոշակի արժեք։

Գ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Ս. Հ. ՌԱՇԻԴՅԱՆ